ՎԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

ԳՈՄԾԱԹՈՂ

(Երբ վանցի մանչակալը զարնան զոմէշներն առաջին անգամ հանում է ախոռից)։

Գարուն բացուերի,
Արև տաքցերի,
Դաշտեր ու ձորեր
Կանաչ են կապեր։
Մանչակալն իկերի
Ծե մատաղ կէլնի
Ձմեռ ծի պախեց
Մկայ [1]) տիւս կանի [2])։
Ձեր մէջք խաստացե
Ձեր վիզ կլորվե
Լծառք [3]) կակղցի
Ձեր կեանք թազացե.
Տէ՛ [4]) էլի Մուսլի [5])
Ախոռէն էլի
Թող աշխար տեսնայ
Որ շատ կարիճ ես
Նման չկայ քեզ.
Կռուան ես, մուսլի,
Քեզ նման իսկի
Մէջ գեղին չկայ
Որ քեզ դէմ կենայ.
Առաջ տիւ [6]) քէլես
Եանէդ բերես
Նորախաս ձագեր
Կուտան գոմէշներ
Թուխ կապոտ [7]) եզներ։
Երբ տիւ տիւս էլնես,
Որ աչք չառնես
Նախանձ դրկցի
Հազարի չիյնես։
Կէս [8]) մշակ խօտաղ
Տիւս առջև դռան
Հաւի ձու բռնած
Քո ճակտին կուտան։
Թեր վզէտ զանկեակ
Կախեմ զըյզընկեայ
Մանչակալն ուրախնայ
Խօտաղ սըյտընկեայ [9])։
Թող, կոճէլ [10]) կախեմ
Որ շատ չվազես,
Ոտքերդ չխամանայ,
Զղերդ չթուլնայ։
Կովան տի՛ւս փրթաւ,
Աչքեր մթնատց,
Խօտաղ թէ մշակ
Աչքին չերևաց։
Գեօռաց գորգոռաց,
Գետին պռտըվաւ [11])

---

[1]) Այժմ. [2]) դուրս է հանում. [3]) վզի բայն, որի վերայ լուծն է դրւում. [4]) դէհ. [5]) մուսուլի գոմէշները շատ լաւ. լինելու համար՝ լաւ գոմէշին մոռայի են ասում. [6]) դու. [7]) կապոյտ. [8]) ահա. [9]) խաղայ. [10]) վզից կոճ են կախում, որ ձ ոտի մէջ քարշ տանէ և չկարողանայ շուտ վազել կամ ուրիշի վերայ յարձակուել. [11]) գետնին քսուել։

Կուաշով ու գլխով
Հողեր փուլ [12]) արաց։
Էլաւ ու փրթաւ
Մէջ գոմէշներուն
Լարեց [13]) ուղարկեց
Զընէն կործանեց.
Ապա վիզ տընկեց
Աչքեր խոլորտեց
Աջ ու ձախ նայեց
Խոռնակ [14]) մ'էլ քաշեց։
Որոնք որ շուտով
Փախան չկռուան
Կռուան մուսլին
Ցաղթող ճանչցան
Շուտով ինոր շուրջ
Էկան ժողվեցան
Պոռտիկ լիզեցին [15])
Հպատակ եղան։
Իսկ որք իրենց ոյժ
Փորձել կամեցան
Կռուան ու փախան
Թշնամի եղան։
Մուսլին նորէն
Դէս ու դէն նայեց
Հակառակորդներ
Շուտով նկատեց։
Մուսլին չմոռցաւ
Նոցա թշնամանք,
Միշտ հալածական
Պահեց ու սատեց։
Նաև մինչ աշուն
Քաշեց լուծ գուլթան
Լծուեցաւ սելին
Խոտ օրան կրեց.
Երբ վիզ բարակցաւ,
Նա ախոռ մտաւ,
Մանճկալի խնամոց
Ապաստան եղաւ։

ՄԱՆԿԱԽԱՂ

Մի քանի երեխայ միասին բոլորշի նստած՝ ձեռները մէկ մէկի վերայ դնելով՝ պտղունցներով բռնում են իրար ձեռքի վրայի մորթից և ամենքը միասին, ձեռքերը վեր ու վայր բարձրացնելով և իջեցնելով՝ երգում են.

Ճվիկ ճվիկ կակլա ճվիկ,
Կակլէն գնաց Երուսաղէմ,
Բուրդ իպե [1]) բամբակ իպե,
Շալ [2]) արաց, շլվար [3]) արաց,

---

[12]) Գլխով ու քոռոշով հողը քանդել եւ ցրուել. [13]) հեռապնդել մէկի եռեւից. [14]) խոշոր աչքերով եւ գլխով յարձակուիլ. [15]) բոլոր յաղթուող գոմէշներն ի նշան հպատակութեան մէկ մէկ գալիս են եւ՝ յաղթողի պորտը կամ աւելի ճիշտ որջանդամը լիզում են։

[1]) Բերեց. [2]) բամկոն. [3]) անդրավարտիք։

Ուրն [4]) արաց՝ ուր լաճուն չարաց.
Թո՜ւռ ճուճուղիկ [5])
Կաիկ կաիկ [6]):

Այս վերջին բառերն արտասանելուն պէս ամենքը շտապով իրանց ձեռքերն ազատելով խաղատացնում են ամեն մէկն իր քովի մանկան բկի տակ, ծիծաղում, իրար վերայ յենւում, որով ձևացնում են մանկական անմեղ զուարճութեան մի սիրուն տեսարան:

ՀԱՐՍԱՆԻՔԻ ԵՐԳ

Հարսանեկան բազմաթիւ ծէսեր կան Վանում. առ այժմ հրատարակում ենք նոցանից հետևեալը.—

Երբ նորապսակ զոյգը եկեղեցուց տուն են դառնում թաշկինակի մի ծայրը տալիս են փեսայի և միւսը հարսի ձեռք. փեսան առջևից, իսկ հարսն ետևից ծանրաքայլ առաջ են գնում, որոնց առջևից գնում են դուսանք ու նուագածուք և երգեցիկ մանուկներ «Արեգական արդարութեան» շարականը երգելով ընթանում են այսպէս փեսաւէրներով ու հարսնածուներով շրջապատած մինչև տան միջնալուռը, ուր դիմաւորում է փեսայի մայրը պնակը բաղարջով ու քաղցրեղէնով լիքը և կաքաւում է այնտեղ:

Այդ միջոցին հարսնածուներն սկսում են հետևեալ խաղն ասել.

—Թագաւորու մէր տիւրս էլի,
Քե ինչ վինչ եմ բիրե,
Քե կեօլք բատ եմ բիրե,
Լեզուն քանց գաղմ եմ բիրե:
—Թագաւորու մէր տիւրս էլի,
Քե ինչ վինչ եմ բիրե,
Ցախտ աւելող եմ բիրե,
Ծամերս փեստող եմ բիրե:

---

[4]) իւր. [5]) ճնճղուկ. [6]) խաղանք:

—Թագաւորու մէր տիւրս էլի,
Քե ինչ վինչ եմ բիրե,
Սխտոր ծեծող եմ բիրե,
Քըոյ գլէօխ տըմփող եմ բիրե։

Անմիջապէս ասում են և հետևեալը սկեսրոջ բերանից.—

«Երկաթ եմ ես պողպատ եմ ես
Երկաթ եմ ես պողպատ եմ ես»։

Եւ դարձեալ հարսի կողմից.

«Հալայ կեցի ոաք կոխեմ ներս,
Երկաթ պողպատ հալեմ դու տես.
Հալայ կեցիր ոաք կոխեմ ներս,
Երկաթ պողպատ քամեմ դու տես»։

ԳՈՎՔ ՎԻՃԱԿԻՆ

Վիճակ նստե բով կանի
Վարդն երեսին հով կանի.
Վիճակ արե քե տանեմ
Ցանըսէ տանիս խանեմ.
Վիճակն ի հօլայ հօլայ
Ազապ լաճեր վիճկին քէօլայ.
Սարի տակէն մուխ կուկայ
Ախպէր քիւրոչ խուր [1]) կուգայ.
Ջան վիճակ ջան
Իմ ջան քե կուրպան։
Վիճակ արերին ծանարմակ
Էօխկէմ կուգայ ուր դմակ.
Վիճկի օրն ի չորեքշաբաթ.
Վիճկի անուն աղասի
Ճէօպերն իշին ապասի.
Վիճակ նստե վեր իշուն
Վիճկի փէշերն արփշում։
Վիճակ նստե վեր պատին
Ազապ լաճեր վեր լակին.
Կանաչ կէնին աղջկներ

---

[1]) Հիւր.

Որ պինդ պախեցին վիճկներ.
Մէջկակուտոր ազգներ
Ձկրցան տարին վիճկներ.
Վիճկի անուն Մարիամ է
Լաճեր վերէն հէյրանին.
Կոկուկ մօլուկ տանսներ
Կան կուգան քէօփակ շներ։
Վիճակ արե ինչ կուզես
Կոճերով կուվան կուզեմ
Ցիրոջ տէօլվաթ կուզեմ.
Վիճակ վիճակ ոսկի կօճակ
Երուսաղէմայ պատէն կախ.
Համբարձվնէ չում Եղիակ
Քիւլէմ բամպակ զարկեր եմ ակ.
Ցէլ կէօ ակ, տէլ կէօ ակ
Գէոչա մը ասեմ գէովք մ'աւելի
Ձում քես մուրուս բէօլրի.
Էկէք խաղանք ակլափստիկ
Ճրոչ թօղին խասան պստիկ
Ծառի տկի տանարմակ,
Քես եար իմ եարոջ մշակ.
Ծառի տկի պտուր ջան վիճակ ջան
Իմ եար քանծ քեռն խավտուն ջան վիճակ ջան։

ԾՈՑԼ ԱՂՋԿԱՑ ԵՐԳԸ

Վանեցի մի մայր իւր ծոյլ և ցոփ աղջկան յորդորում է աշխատասէր լինել. աղջիկը պատասխանում է նորան.—

Ման, մարէ, ի՞նչխ անեմ
Բուրդը գզե՞մ, թէ չգզեմ.
Հաւէս չունիմ, ի՞նչխ անեմ.

—

Ման, մարէ, ի՞նչխ անեմ,
Արջկան (մանած) մանե՞մ, թէ չմանեմ.
Հաւէս չունիմ, ի՞նչխ անեմ։

Ամա՛ն, մարէ, ի՞նչխ անեմ,
Գուլպայ գործե՞մ, թէ չգործեմ,
Հաւէս չունիմ, ի՞նչխ անեմ։

—

Փողն ի (փողոցի) դրան ես կայնել,
Եկող գնացող սէյր անել
Հաւէս ունիմ, ի՞նչխ անեմ։

—

Աչքով ընքով ինձ կանեն
Հաւէս կուտան, ի՞նչխ անեմ
Սիրտս կտաքնայ ի՞նչխ անեմ։

—

Ամա՛ն, մարէ, ի՞նչխ անեմ.
Խօրօտ կտրիչ ախչիկ եմ.
Էրիկ կուզեմ, սէր կուզեմ
Սիրտս կեռայ ի՞նչխ անեմ։

ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ

Էլեր ես կերթաս Վարագ
Վարագայ ճանապախ պարակ
Քեզ ուտելիք մեղր կարաք
Քեզ հագնելիք ալ ու կումաշ։

Էրթաս սուրբ խաչ
Ցէր ասյ քե լաճ
Ոսկի ուրուրոց
Մարգրտէ ծածկոց։

Մանուկ քնէ ծառի տակ
Ծալ ծալ ոսկին պարձի տակ
Մանուկ էլի վեր
Ջուրն իրե տակդ։

Կանաչ կանաչ կանչեցեք
Կանչի մէյտան բացեցեք
Պէօզ պէօզ ձիանք թամքեցեք

Նորահարսներ հեծուցեք
Շուտ մուրատին հասուցեք։

Ոսկի տաշտ ոսկի պնակ
Մէջն ի առէ դեղին արեգակ։

Պէօշ պազըրգեան իկեր ի
Մեր կալատեղն իջեր ի
Ոսկի ցցեր զարկեր ի
Հրեղէն ձիանք կապեր ի։

Փունջ մանուշակ խրխրիցին.
Պարոն ս. Գէորգ նստցուցին
Վով էր իրե պարոն ս. Գէորգ
Մէջքն ի կապե ոսկ քեամար
Լոսն ի կապե կանաչ կամար։

Ցնկիկ մը եմ անկէ հետ

առվի ափան
Ճըղէր ի Թալէ հետ արեգական
Աստուած քեզ ստեղծէ տուե ձի համար
Մէջքիկդ ի պարակ գրկելու համար
Իրեստ ի կարմիր պագնելու համար։

Երկնից պալնսներ ընցաւ
Երկնից դռներ բացվաւ
Մեր տուն արիվով լցվաւ
Մեր սեղան կարմիր խնձորով։

Պստիկ Թարաճէմ դրինք
Մօտ Աստուած հարցում գնացինք
Մեր սեղան բարութնով լցվաւ
Մեր պակն արիվով լցվաւ։

Ելար վէր աղբին
Թռար վէր Թախթին։

Կութնի պարձ կութնի մինտար
Վէրէն պառկի տաճի մշակ։

Նստեր ես քէօշկ
Կուտես լէօշկ
Կը համրես կռօշկ։
[illegible]
[illegible] Մանես մառան
Ձեռտ պարզես ոսկու աման։

Թուրվանտա Թաթար
Պարձերես կաթար
Կէրթաս աղթամար
Սուրբ խաչի համար,
Սուրբ խաչ քեզ տայ լաճ
Անուն մխիթար։

Ըղէ մարդ.
Պատրագլէօխ,
Հաց վաստկօղ,

Պստիկ իշուն
Գեռ մը ապրշուն
Քեզ հերիք ի
Զում աշուն։

Տու ունես հաղար մաքի
Հազարի պճեղ ոսկի
Հազարի պուրթն ապրշում
Հազարի կաթ կը կթես
Հազարի հով կը նստես
Հազարի ծով կը Թափես։

Էսօր համպարծում
Համպարծման կիրակին
Քրիստոս ուր աթոռով էջաւ մեր իգին
Խաչակնքեց ընտիր գինին
Պատրուս արաց վէր իրիքին
Իտու իմ մօր, իմ մէր խմաւ
Իպե մանուկ սրտին։

Տիւ պառկեր ես տանսէ տանիս
Քեաշեր ես վերէդ սամուր քըքիկ.
Աստուած ըսկուն քեզ տայ
Որ մռջման գեարվընի պէս կեայ։

Մէրն ի կիրե խաւըրծիլ
Տըղէն պիրէ ոսկի ծիլ.

Մէրն ի կիրե Թանխուս
Տղէն պիրէ փամփուս։

Մէրն ի կիրէ գէօմշու կաշի
Տղէն պիրէ կըզըլպաշի։

Մէրն ի կիրէ սուքի մուր
Տղէն պիրէ թիւքը մուր։

Մէրն ի կիրէ կեապի տակ
Տղէն պիրէ պատի տակ։

Մէրն ի կիրէ ճլպիւր
Տղէն պիրէ պլպիւլ.

Մէրն ի կիրէ ձուազեղ
Տղէն պիրէ կոր անծեղ։

Զարկի կողիդ արի եարա.
Տու ինչ անես քոշք սարայ.
Գանա ջայնամ ծավար աղա.

Խէրդ անիծած չկուն Կազար
Հաղս ուզելով էլայ պէզար.
Տուռ տիելով մաղաւ ճկիկ.
Անիծի քե սուրբ Մկրտիչ։
Սարեր ինկէ քո խրխնջոց.
Ծորեր ինկէ քո վըրվնջոց

Քէ ինչ պան կա թուրթիւնջնոց
Թուրթիւնջներաց ծեռքի ջնջոց։

Նստեր ես քոշկ
Խմես վռոշ.
Խամրես կըռուշ։

Շիլա լըխէփ.
Ճաթ փոխքատար.
Խիվինցար հէր
Զխաքար։

Պատրուս մը եմ արե թուրէն ուր մէնէն
Ատուած ձիկ չի տուր շիւքը եմ ուրմէնէնէն։

Նստեր ես ծովու ափ լըվաց
Քո սապոն ոսկեջրած
Իմ հօր մոր ինչ մեղ դրած
Իմ ճակատն էն ի գրած։

Շարէ շապիք ոսկի կօճակ
Իւրիւսաղմայ դռնէնը կախ
Քեանի կէնաս խաթուն կէնաս
Եթէ մեռնիս լուսուն տիրանաս։

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Թագաւոր թագն է սղոց.
Քառասուն կին ունի փողոց.
Իւր կթողնի կերթայ այլոց։
(աքաղաղ)

Խաթիւն նստէ խաթիւնանակ,
Ծամեր թալե շարվատանակ
Աննկնունք տղան գիրկ,
Անծակել գինտն ակնճէն։
(խաղող)

Էրկէն փողան բարակ աղան,
Կուղմարգարէն կերթայ կուգայ
(խուր եւ փարխաշ)

Էնտեխը դար, էնտեխը դար
Մէջն անդադար։
(առուն ու ջուր)

Ափ անեմ ծափ անեմ
Կարմիր իրես պաք անեմ։
(ընաղարջ)

Ջիկ ձող մը կայ, տոր պարզեմ
Էն տեխ կերթայ։ (միտք)

Խաւքմ ընցաւ երկնուց ոսկի
Լական կէր կտուց։
(արեգակ)

Ճրկռի դնեմ կատարդ բռնեմ
Արդար տու կուս ես։ (կշիռ)

Ոսկի կիւկիւմ մէջն իլիվան
(ժամացոյց)

Տակ խանտակ պորան արեգակ։
(մեռել)

Ալը խոտ ալմալը խոտ. ծէր
կապոտ կանաչ առուոտ։
(ծիրանի գոտի)

Երկնուց էլէի մը իջաւ լեղու
չկէր. խրեղէն ձին էր հեծեր
հոգի չկէր. օր երկու ոչխար
կուտէր ուսկոռ չկէր։
(տղայ ու ծիծեր)

Մե չարշափ մը կայ՝ ամեն տեղ
կծածկի մէկ ծով չծածկեր։
(ծիւն)

Խաւք մը կայ՝ աշխարհ ըմէն
կարցէ կախ է։
(կայրդալ եւ գրել)

Մե տուն մը կայ միլիոն աս-
քեար կտանի ոչ սուն կայ և
ոչ գերան։ (մրջնի բոյն)

Էլին էլ վէլին
Թագաւոր վէր սէլին.
ջրնտովզարկինեարալու արին,
արուն դաղէ դաղ ցվրեցին
ուսկռներ տան մէջ դաղիցին։
(ծծումբ, իւղ, կօրմաստ)

ՀԱՑԿԱՎԱՆՔ

Հայկավանք գիւղը իւր անունով մինչև այժմ գոյութիւն ունի Վանտոսպ գաւառի մէջ. դա գտնւում է Վան քաղաքի բերդապարսպից դուրս արևելեան կողմը մի ասպարէզ հեռաւորութեան վերայ և կոչւում է «Խրախկրավրանք», Արդէն յայտնի է, որ վանեցիները հ տառը խ ն հնչում, օրինակ՝ փոխանակ ասելու՝ հաց, հոր, հին, հպարտ եայլն, ասում են՝ խաց, խոր, խին, խպարտ. ինչպէս նաև ա տառը երկու կերպ են արտասանում. մէկ՝ ա-ի սովորական հնչումով, ինչպէս օրինակ՝ մարդ, խաց, խարիր, ականջ, աչք, մատ-բառերի մէջ. իսկ միւսը հնչում են բերանաճապաղ՝ ա տառը՝ ըա, ուստի մենք էլ գրում ենք այդ արտասանու-

թեամբ, այն է՝ խըախկըավըանք, որ համապատասխանում է «Հայկավանք»-ին։

Հայկավանքի մասին հետևեալ աւանդութիւնը կայ վանըցիների մէջ, որ այժմ էլ պատմում են նոքա իբրև ստոյգ տեղեկութիւն՝ ականատեսի պէս.

«Երբ որ Խայկ կերթըար Խաւուձոր (Հայոց Ձոր, «որ գտնւում է Վանի հարաւային կողմը չորս ժամ «ճանապարհ հեռու) Բէլըա խետ կռվելու, ուր (իւր) «ճըոջ ու ծանտը բանեը ի թող (թողեց) էստ տեղը ա- «պա գնաց կռվելու»։

ՀԱՅԿԱԲԵՐԴ

Բացի «Խըախկըավանք»-ից Հայոց Ձորի արևելեան ծայրի մէջ, Աստուածաշէն գիւղի մօտերը գտնւում է և մի մենաստան «Խէքըավըանք» անունով, որ այժմ շէն է և մարդաբնակ, ինչպէս և Հայկավանք գիւղը։ Աստուածաշէն գիւղի մօտ մի աւերակ բերդ կայ «Հայկաբերդ» անունով։

ԲԷԼՈՒԱՅ ՍԱՐ

Բէլուայ սարը, որին տեղացի մահմեդականները Նէմրիւթ տաղի (Նեբրովթի սար) են կոչում, գտնւում է Վանայ ծովի արևմտեան կողմը, որ անջրպետում է ծովն ու Մշու «Ջուխուր» ասուած դաշտը։ Սարի ստորոտում կայ Բէլու անունով գիւղ։ Յայտնի չէ, գիւղն է իւր անունը սարի անունից ստացել թէ հակառակը։ Բէլուայ սարը երևում է թէ Վանի, թէ Հայոց Ձորի և թէ Մշոյ դաշտի բնակիչներին։

Բէլուայ սարը ակներև է «Հէրկերտ» (Հայկերտ՞)

անունով գիւղի բնակիչներին, որ գտնւում է Մշոյ դաշտի մէջ։

ԼԷՋՔ

Վան քաղաքի հիւսիսակողմը մի ժամուայ ճանապարհ հեռու «լէզք» անունով մի գիւղ կայ, որին տեղացի մահմեդականները գալաճուղ (բերդիկ) են անուանում, գիւղի մէջ ուղղաբարձր բերդանման մի քար լինելու պատճառով։ Վանեցիները աւանդաբար պատմում են, թէ այդ գիւղի անունը «լէզք» է մնացել այնտեղից, որ հին ժամանակ այդ գիւղի քարագլխին է եղել շինուած Արային լիզող կռոց տաճարը։

Ցիշեալ կռատունն անհետանալով՝ այժմ նորա տեղ շինուած է Ամենափրկիչ անունով եկեղեցին, որին հայերն ուխտ են գնում և մատաղներ անում թերևս հեթանոս հայերի 'ի հնումն կատարած զոհագործութեանց 'ի յիշատակ։—Հետաքրքիր է այդ մատաղն եփելը։—Թէպէտ գիւղն ինքը ջրաէտ և ծառազարդ է և այգիներով լի, սակայն հայերն Ամենափրկչի եկեղեցւոյն իրանց ուխտը կատարելուց յետոյ՝ գիւղից կէս ժամի չափ հեռու արևելակողմը դաշտն են գնում, մի ամայի տեղ և այնտեղ են եփում իրանց մատաղը։ Այդ տեղի համար աւանդութիւնն ասում է, թէ դա կուռքերի զոհերն եփելու թոնիրների տեղն է։ Ուխտաւորներն այդտեղ ուտում են իրանց մատաղը, երգում, պարում և ուրախանում։

ՀԱՅԿԻ ՈՐԴԻՔԸ

Հայկի որդւոց թուի մասին Մ. Էմինը Վարդանի պատմութեան ռուսերէն թարգմանութեան մէջ յիշում

է մի աւանդութիւն, որի համեմատ Հայկը ունեցել է 6 տղայ և 6 աղջիկ։ Առաջ ենք բերում այստեղ վանեցւոց աւանդութիւնն էլ այդ մասին.—վանեցիները մինչև այսօր «կշիռ» կոչուած աստղերն անուանում են «խէքեր» (հէքեր, հայքեր, հայկեանք*)։ Երբ «բազումք» աստղերից յետոյ հորիզոնի վերայ բարձրանում են «կշիռ» աստղերը, վանեցիքն ասում են. «խէքերն էլան». երբ մտնեն դէպի արևմուտ, ասում են. «խէքեր մտան»։ Հետո էլ վանեցիք ասում են, որ «հայկն երեք լաճ ունէր, երեք աղջիկ, որ ասոնք են» ցոյց տալով խէքերը երկնակամարի վերայ։ [1])

Ժողովեց ԳԻՒՏ ա. ք. ԱՂԱՆԵԱՆՑ

---

[1]) Այս համարից սկսած „Լումայ"-ի մէջ սկսում ենք հետզհետէ հրատարակել „ժողովրդական" բաժնում ժողովրդական աւանդութիւնների և բանաւոր գրականութեան միացորդների այն հարուստ հաւաքածոյքը, որ կազմել ենք մասամբ մեր՝ Տաճկահայաստանում կատարած ճանապարհորդութեան միջոցին, մասամբ էլ մեր ձեռքը հասած այլ ժողովածուներից։ „Վանի կեանքից" յօդուածում գրուած վերջին պատմական աւանդութիւնները վերցրած են հանգուցեալ Աղուանեանի հատուկտոր ժողովածոյքից։